

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



### ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

- 1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ ..... 2
- 2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ ..... 4
- 3. ԱՄՓՈՓԱԳԻՐ ..... 5
- 4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ.....10
- 5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ..... 14
- 6. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ.....15
- 7. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ .....42
- 8. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ..... 44
- 9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 45

## 1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

### Հաշվեքննության հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 255-Ա որոշում:

### Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

### Հաշվեքննության առարկան

2021 թվականի ինն ամիսների պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:

### Հաշվեքննության առարկայի չափանիշները

«Բյուջետային համակարգի մասին», «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին», «Գնումների մասին», «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքներ, ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի «ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկը հաստատելու, ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմին սահմանելու, ՀՀ կառավարության 2008թ հունվարի 10-ի թիվ 112 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 265-Ն որոշում, ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 04-ի «ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2004 թ դեկտեմբերի 9-ի N 1942-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1419-Ն որոշում, ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «ՀՀ 2021թ պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշում, ՀՀ կառավարության 10.01.2008թ-ի «Ճանապարհային գծանշմանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին թիվ 113-Ն որոշում, «Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում» ծրագրի շրջանակում կնքված պայմանագրեր և այլն:

**Հաշվեքննությունն  
ընդգրկող  
ժամանակաշրջանը**

2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ը:

**Հաշվեքննության  
կատարման ժամկետը**

2021 թվականի հոկտեմբերի 18-ից մինչև 2022 թվականի հունվարի 31-ը:

**Հաշվեքննության  
մեթոդաբանությունը**

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և Հաշվեքննիչ պալատի Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:

**Հաշվեքննությունն  
իրականացրած  
կառուցվածքային  
ստորաբաժանում**

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի հինգերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Ա. Գևորգյանը:

<b>ՊԸՊ</b>	Պայմանագրի ընդհանուր պայման
<b>ՀՏՁՀ</b>	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
<b>ԱԶԲ</b>	Ասիական զարգացման բանկ
<b>ՊՀՊ</b>	Պայմանագրի հատուկ պայման
<b>ՎԶԵԲ</b>	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
<b>ՀՀ</b>	Հայաստանի Հանրապետություն
<b>հազ.</b>	Հազար
<b>ՍՊԸ</b>	Սահմանափակ պատասխանատվության ընկերություն
<b>ՓԲԸ</b>	Փակ բաժնետիրական ընկերություն
<b>Կմ</b>	Կիլոմետր

## 2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

### 3. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ՀՀ պետական բյուջեի 2021թվականի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 114,902,606.02 հազ. դրամ, իսկ 2021թվականի ինն ամիսների ճշտված պլանով 85,925,578.02 հազ. դրամ: Նախարարության կողմից իրականացված միջոցառումներից հաշվեքննություն է իրականացվել 12 միջոցառումների նկատմամբ, որոնց դրամարկղային ծախսը կազմել է 33,627,235.80 հազ. դրամ և կազմում է 2021թվականի ինն ամիսների ճշտված պլանի 78,5 տոկոսը:

Հաշվեքննվող օբյեկտը հաշվեքննության ընթացքում կազմված արձանագրությունների վերաբերյալ ներկայացրել է <<դիտողություններ>> (պարզաբանումներ):

Հաշվեքննված 12 միջոցառումների հավեքննությամբ արձանագրվել է.

**(1049-21004) Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում» ծրագիր**

Ծրագրի շրջանակում 2017 թվականի 1-ին եռամսյակում կազմակերպված միջազգային մրցույթի արդյունքում կնքվել է 3 պայմանագիր, որոնք շինարարական աշխատանքների ընթացքում ծագած խնդիրների կարգավորման համար ենթարկվել են փոփոխությունների՝

- «Հորիզոն-95» ՍՊ ու «Օբերոսլեր Կավ Պիետրոս» ընկերությունների հետ կնքված թիվ CW-ICB-M6/2016-1 պայմանագիրը՝ գումարով 4,876,787.38 հազ. դրամ /նախահաշվային արժեքը 6,577,153.29 հազ. դրամ/, փոփոխությունների արդյունքում պայմանագրի գինը ավելացել է և դարձել 4,927,229.55 հազ. դրամ.
- «Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ և «Բլաք Սի Գրուպ» ՀԶ-ի հետ կնքված թիվ CW-ICB-M6/2016-2 պայմանագիրը, գումարով 2,865,228.93 հազ.դրամ /նախահաշվային արժեքը 6,004,194.42 հազ. դրամ/, փոփոխությունների արդյունքում դարձել է 3,518,858.67 հազ. դրամ.
- «Սուարդի» ԲԸ հայաստանյան մասնաճյուղի հետ կնքվել է թիվ CW-ICB-M6/2016-3 պայմանագիրը՝ գումարով 4,719,096.24 հազ. դրամ /նախահաշվային արժեքը 5,849,888.21 հազ. դրամ/, փոփոխման արդյունքում դարձել է 6,328,896.75 հազ. դրամ:

Ծրագրի սկզբից մինչև 30.09.2021 թվականը ներառյալ ընկած ժամանակահատվածում ծրագրի շրջանակում կնքված պայմանագրերով նախատեսված 14,774,985.03 հազ. դրամի աշխատանքներից իրականացվել է ընդամենը 9,145,694.02 հազ. դրամի կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ, կամ **61.89 տոկոս** /«Հորիզոն-95» ՍՊԸ 61,78 տոկոս, «Ա.Ա.Բ.

ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ 62,81 տոկոս, «Սուարդի» ԲԸ 61.48 տոկոս/, որի դիմաց վճարվել է 9,434,484.60 հազ. դրամ:

Պայմանագրերը կնքվել են 2017 թվականի նոյեմբերի 30-ին՝ 900 օր ժամանակահատվածով, իսկ կապալառուներին ծանուցման համաձայն աշխատանքների մեկնարկի սկիզբ է ընդունվել 2018 թվականի մայիսի 29-ը, կամ աշխատանքների ավարտը սահմանվել է 2020 թվականի նոյեմբերի 14-ը:

Նոր աշխատանքների ավելացմամբ պայմանավորված պայմանագրերում կատարված փոփոխությունների արդյունքում, որոնք կազմել են պայմանագրերի արժեքի 19,41 տոկոսը /2,419,359.25 հազ. դրամ/, աշխատանքների կատարման ավարտի ժամկետները երկարացվել է պայմանագրով նախատեսված ժամկետի 42,3 տոկոսի չափով՝ 381 օրով, ավարտի ժամկետ սահմանելով 2021 թվականի նոյեմբերի 30-ը, իսկ դրանց կատարողականները պայմանագրերի ավարտի ժամկետից 60օր առաջ՝ 2021 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ, դեռևս կազմել է ընդհանուր ծավալի 61,89 տոկոսը:

Պայմանագրերով սահմանված աշխատանքների ավարտի ժամկետներից 205 օր անց՝ 2021 թվականի հունիսի 8-ին կատարված պայմանագրերի փոփոխություններով աշխատանքների ավարտների ժամկետները թիվ CW-ICB-M6/2016-1 և CW-ICB-M6/2016-2 պայմանագրերով երկարացվել են 290 օրով՝ մինչև 31.08.2021թ, թիվ CW-ICB-M6/2016-3 պայմանագրով 320 օրով մինչև 30.09.2021 թվականը, իսկ 2021 թվականի օգոստոսի 30-ին կատարված փոփոխությունների արդյունքում աշխատանքների ավարտի ժամկետները երեք պայմանագրերով երկարացվել է մինչև 30.11.2021 թվականը:

Պայմանագրերով սահմանված աշխատանքների ավարտման ժամկետի /14.11.2021թ/ երկարաձգման համար, ինժեները իր կարծիքը պատվիրատուին թիվ CW-ICB-M6/2016-1 պայմանագրի համար ներկայացրել է պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտի ժամկետից 165 օր հետո՝ 28.04.2021 թվականին, թիվ CW-ICB-M6/2016-2 պայմանագրի համար պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտի ժամկետից 93 օր հետո 15.02.2021թ.-ին, իսկ թիվ CW-ICB-M6/2016-3 պայմանագրի համար պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտի ժամկետից 110օր հետո՝ 04.03.2021թ.:

ՊԸՊ 20.1 կետի համաձայն Կապալառուն ավարտի ժամկետը երկարացնելու մասին ինժեներին պետք է ծանուցեր հնարավորինս շուտ և ոչ ուշ քան երկարացման պատճառ հանդիսացող հանգամանքներն ի հայտ գալուց 28 օրվա ընթացքում, իսկ ինժեները ծանուցումը ստանալուց 42 օր հետո պետք է պատասխաներ պահանջին, տալով իր համաձայնությունը կամ մերժումը: Կապալառուն վերը նշված 28-օրյա ժամկետում չի կարողացել պահանջի ծանուցում ներկայացնել, սակայն կատարման ժամկետները երկարացվել է:

Արձանագրվել է անհամապատասխանություն նախարարության կողմից 2021 թվականի ինն ամիսների համար ներկայացրած «Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի» հաշվետվության մեջ նշված փաստացի կատարված աշխատանքների ցուցանիշի և նախարարության կողմից ներկայացված տեղեկատվությամբ ճանապարհի կառուցում և հիմնանորոգում փաստացի կատարված աշխատանքների ցուցանիշների միջև:

Անհամապատասխանություն է արձանագրվել Տարածքային զարգացման և շրջակա Միջավայրի նախարարական կոմիտեի 06.09.2019 թվականի նիստի թիվ ԿԱ151-2019 արձանագրության 6-րդ կետի 2-րդ ենթակետի 1-ին պարբերությամբ նախատեսված աշխատանքների և փաստացի կատարված աշխատանքների միջև:

**(1049-11001) «Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ»**

Ծրագիրը ներառում է միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային և ընթացիկ պահպանման, պարբերական պահպանման (միջին նորոգման), նշագծման, մետաղական արգելափակոցների պահպանման և վնասված հատվածների վերականգնման, արհեստական կառույցների պահպանման և շահագործման աշխատանքները: Պահպանման աշխատանքները իրականացվել է ՀՀ կառավարության 04.11.2010թ թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան:

ՀՀ կառավարության 13.02.2014 թվականի թիվ 265-Ն որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պետական ճանապարհային մարմին է սահմանվել՝

1) կառավարման մասով՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը.

2) տնօրինման մասով՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը՝ որոշման հավելվածում նշված միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների մասով՝ բացառությամբ Երևան քաղաքի տարածքում գտնվող՝ այդ ճանապարհների մաս հանդիսացող հատվածների:

Նույն որոշմամբ հաստատվել է ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկը՝ դասակարգված ըստ նշանակության, համաձայն որի ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 1753.12 կմ, իսկ հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընդհանուր երկարությունը 2000.11 կմ:

2021 թվականին ՀՀ պետական բյուջեից ծրագրի կատարման համար նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 10,870,700.60 հազ. դրամ, իսկ ՀՀ կառավարության 30.12.2020 թվականի թիվ 2215 որոշման համաձայն ինն ամիսների ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 8,139,508.30 հազ. դրամ: 2021 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ՝ ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների հաշվետվության դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 5,999,267.36 հազ. դրամ:

Թվով 33 ընկերությունների հետ կնքվել է համաձայնագրեր 39 տարածաշրջանների ավտոճանապարհների պահպանման աշխատանքներն իրականացնելու համար: 2021 թվականի ինն ամսում հաշվարկվել է 3,545,738.40 հազ. դրամի կատարողական (հավելված 1):

Մետաղական արգելափակոցների պահպանման աշխատանքները 10 մարզերում իրականացնելու համար թվով 4 ընկերությունների հետ կնքվել է 4 պայմանագրեր: 2021թ.-ին ինն ամսում իրականացվել է 764.3 կմ մետաղական արգելափակոցների պահպանում /նախատեսված 720.6 կմ/, պլանով նախատեսվածից 43.7 կմ-ով ավելի, փաստացի կատարողականը կազմել է 766,417.00 հազ. դրամ (հավելված 9):

ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների նշագծման աշխատանքները իրականացնելու համար թվով 3 ընկերությունների հետ 10 մարզերի ավտոճանապարհների նշագծման համար 2021 թվականին կնքվել են 518,026.40 հազ. դրամի աշխատանքների գնման համաձայնագրեր, նախատեսվել է իրականացնել 495,597.8 քմ. նշագծման աշխատանքներ: 2021 թվականի ինն ամիսների կատարողականը կազմել է 384,346.7 հազ. դրամ (հավելված 11):

ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող արհեստական կառույցների պահպանման և շահագործման աշխատանքների համար թվով 5 ընկերությունների հետ 3 թունելների և 5 կամուրջների համար կնքվել են 5 համաձայնագիր արհեստական կառույցների պահպանման աշխատանքների համար 242,052.58 հազ. դրամ արժեքով: 2021 թվականի ինն ամիսների կատարողականը կազմել է 172,920.20 հազ. դրամ (հավելված 10):

Հաշվեքննության արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություն «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 8-րդ և 9-րդ մասերով, ՀՀ կառավարության 04.10.2010 թվականի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Կարգ»-ի 11-րդ, 22-րդ և 24-րդ կետերով սահմանված պահանջների, թիվ 1419 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և գնման պայմանագրերում լրացումներ կատարելու թույլտվություն տալու մասին» ՀՀ

կառավարության 26.11.2020թ-ի թիվ 1864-Ն որոշման 1-ին մասի 4-11-րդ կետերի, ՀՀ կառավարության 13.02.2014 թվականին թիվ 265-Ն որոշման 4-րդ կետի 2)-րդ ենթակետի, 01.01.2008 թվականի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ճանապարհային գծանշմանը ներկայացվող պահանջները, դրա կիրառման կանոններ»-ի 22-րդ կետով սահմանված պահանջների հետ:

**2. 1049-11007 «Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի համակարգում և կառավարում»**

ՀՀ պետական բյուջեից Ծրագրի համար նախարարությանը 2021 թվականի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 2,109,916.3հազ. դրամ, իսկ ՀՀ կառավարության 30.12.2020 թվականի թիվ 2215-Ն որոշման համաձայն 2021 թվականի ինն ամիսների ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1,367,397.50 հազ. դրամ: ՀՀ 2021թվականի ինն ամիսների պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ՝ ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների հաշվետվության դրամարկղային ծախսը կազմել է 1,127,696.34 հազ. դրամ, փաստացի ծախսը 1,127,190.47հազ. դրամ:

Խորհրդատվական ծառայությունների՝ «Նախագծի վերանայում և տեխնիկական վերահսկողություն» ծառայությունների մատուցման համար, /03.04.2018 թվականին 42 ամիս ժամկետով, 4,038.6 հազ. ԱՄՆ դոլար արժեքով/նախահաշվային արժեքը 4,200,000 ԱՄՆ դոլար այդ թվում՝ ԱԱՀ/ պայմանագիր է կնքել «Սաֆեջ» Բաժնետիրական ընկերության հետ:

2021թվականի մայիսի 24-ին կնքվեած թիվ 5 համաձայնագրի համաձայն, պայմանագրի ժամկետը սահմանվել է 51ամիս, ժամկետի ավարտը հետաձգվել է մինչև 03.08.2022թվականը, իսկ պայմանագրի երկարացմամբ պայմանավորված անհրաժեշտ լրացուցիչ ներգրավվածությունը հանգեցրել է պայմանագրի գումարի ավելացմանը, 4,489,649 ԱՄՆ դոլար, առանց ԱԱՀ-ի, որի սահմանաչափը սահմանվել է 897,929 ԱՄՆ դոլար, իսկ 2021թվականի օգոստոսի 13-ին կնքված թիվ 6 համաձայնագրով պայմանագրի ժամկետի ավարտը սահմանվել է 55 ամիս և հետաձգվել մինչև 03. 12.2022 թվականը: Կատարված փոփոխության համար որպես հիմնավորում ներկայացվել է այն հանգամանքը, որ շինարարական աշխատանքների ավարտի ներկայի ժամկետը 2021թվականի սեպտեմբերի 30-ն է և նոր նախագծային փոփոխությունների հետևանքով աշխատանքների ժամկետն ամենայն հավանականությամբ կհետաձգվի մինչև նոյեմբերի 30-ը և Փաստորեն առանց հիմքի պայմանագրում կատարվել է ժամկետի փոփոխություն:

«Սոցիալական անվտանգության աջակցություն» խորհրդատվական ծառայությունների մատուցման համար որակի և գնի վրա հիմնված ընտրության ձևով 13.09.2017 թվականին 15 ամիս ժամկետով՝ մինչև 13.12.2018 թվականը «ԱԼՏԱՎԻՊ» ՍՊԸ-ի հետ 198,294.9 հազ. դրամ արժեքով /Նախահաշվային արժեքը 166,704.0 հազ. դրամ/ կնքել է թիվ ADB/M-6/CS/QCBS/02 պայմանագիրը, որպես մրցույթում ամենացածր գին առաջարկած մասնակից: Պայմանագրի կնքման պահից մինչև 01.01.2021 թվականը մատուցվել և դրա դիմաց վճարվել է 150,373.7 հազ. դրամ: Նախարարության կողմից ներկայացրած տեղեկատվության համաձայն ընկերության կողմից 2021 թվականի ինն ամիսների ընթացքում ծառայություններ չի մատուցվել և գումար չի վճարվել:

Խորհրդատուն հողերի վերաբերյալ անավարտ գործերի պատճառով պայմանագրով սահմանված ժամկետում չի կարողացել ավարտել ծառայությունների մատուցման իր աշխատանքները նախքան գործունեության ժամկետի ավարտը, որի հետևանքով պայմանագրում 06.02.2019 թվականին՝ պայմանագրի ժամկետի ավարտից 55 օր ուշացումով, 21.02.2020 թվականին՝ 191 օր ուշացումով, 03.12.2020 թվականին, 21.07.2021 թվականին կատարված փոփոխությունների արդյունքում պայմանագրի ավարտի ժամկետը երկարաձգվել է մինչև 2022 թվականի օգոստոսի 13-ը, իսկ թիվ 4 փոփոխման կարգադրագրով փոփոխվել է նաև վճարման կարգը:

#### **4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

Աղյուսակ 1  
հազ. դրամ

Ծրագիր միջոցառում	Ծրագրերի և միջոցառումների անվանումները	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամանակա հատվածի պլան	Հաշվետու ժամանակա հատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
1049-11001	Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ	10,895,900.6	10,870,700.6	8,164,708.3	8,139,508.3	5,999,267.4	5,999,267.4
1049-11007	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի /Մ6 Վանաձոր-Բագրատաշեն/ բարելավման ծրագրի համակարգում և կառավարում	2,250,416.3	2,109,916.3	1,857,897.5	1,367,397.50	1,127,696.3	1,127,190.5
1049-21004	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի ծրագրի կառուցում և հիմնանորոգում	1,393,587.1	2,437,587.1	1,393,587.1	2,437,587.1	2,150,698.2	2,180,644.4
1146-11001	Տարրական ընդհանուր հանրակրթություն	7,947,183.2	7,924,617.4	6,151,119.8	6,128,554.0	5,811,289.0	6,189,366.2
1146-11002	Հիմնական ընդհանուր հանրակրթություն	8,968,737.7	8,968,737.7	6,941,803.0	6,941,803.0	6,940,837.1	7,897,674.1
1157-12002	Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ	2,229,951.6	729,951.6	1,560,970.0	560,970.0	560,970.0	560,970.0
1157-12008	Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների	2,862,392.6	2,862,392.6	1,926,217.0	1,926,217.0	1,916,216.9	1,916,216.9

Ծրագիր միջոցառում	Ծրագրերի և միջոցառումների անվանումները	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամանակա հատվածի պլան	Հաշվետու ժամանակա հատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
	իրականացում						
1157-12017	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագիր	2,033,101.8	1,033,101.8	1,829,791.5	1,029,791.5	1,009,489.8	1,009,489.8
1157-12018	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների դրամաշնորհային ծրագիր (Տրանշ Ա, Բ, Գ)	2,957,130.1	1,957,130.1	2,661,417.6	1,661,417.6	446,032.7	446,032.7
1157-12021	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի շրջանակներում ճանապարհային շինարարություն	5,239,167.8	8,712,783.3	5,239,167.8	8,562,783.3	4,002,391.6	6,163,371.3
1189-12001	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի շրջանակներում ՀՀ դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումներ	4,745,313.0	6,007,912.0	3,482,497.0	4,041,516.0	3,662,346.8	3,662,346.8
1167-32006	Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KfW) աջակցությամբ իրականացվող Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայանների	1,207,003.9	1,207,003.9				

Ծրագիր միջոցառում	Ծրագրերի և միջոցառումների անվանումները	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամանակա հատվածի պլան	Հաշվետու ժամանակա հատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
	դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվող ներդրումներ						
	Ընդամենը	52,729,885.7	76,760,118,3	41,209,176.6	42,797,545,0	33,627,235.8	37,152,570.8

## 5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում ձեռք ենք բերվել բավարար տեղեկատվություն հաշվեքննության իրականացման համար: Հաշվեքննությունը իրականացվել է նաև մեզ հասու տեղեկատվության հիման վրա:

Առկա տեղեկատվության հիման վրա իրականացված հաշվեքննությամբ Էական խեղաթյուրումներ չի հայտնաբերվել:

## 6. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

**6.1 (1049-21004) Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի կառուցում և հիմնանորոգում» ծրագիր**

**6.1.1 Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի Ընդհանուր Պայմանների 20.1 կետի պահանջների հետ:**

Համաձայն ՊԸՊ 20.1 կետի Կապալառուն Ինժեներին պետք է ծանուցի պայմանագրի ավարտի ժամկետը երկարացնելու մասին հնարավորինս շուտ և ոչ ուշ քան երկարացման պատճառ հանդիսացող հանգամանքներն ի հայտ գալուց 28 օրվա ընթացքում, իսկ Ինժեները ծանուցումը ստանալուց 42 օր հետո պետք է պատասխանի պահանջին, տալով իր համաձայնությունը կամ մերժումը: Ծանուցումները կատարվել են պայմանագրով սահմանված 28 օրյա ժամկետից էական ուշացմամբ, Կապալառուները վերը նշված 28-օրյա ժամկետում չեն կարողացել պահանջի ծանուցում ներկայացնել, սակայն պայմանագրի կատարման ժամկետները երկարացվել է:

**6.1.2 Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի Ընդհանուր Պայմանների 8.7 կետի պահանջների հետ:**

«Սուարդի» ԲԸ հայաստանյան մասնաճյուղի հետ կնքված թիվ CW-ICB-M6/2016-3 պայմանագրում կատարված թիվ 2 փոփոխման հրահանգով նախատեսված ճանապարհի կմ64+575-կմ71+564 հատվածում երթևեկամասից դուրս կառուցման ենթակա d-500մմ տրամագծով և 5826գմ երկարությամբ նոր ջրագծի կառուցման աշխատանքները՝ որոնց ընթացքում պետք է ապահովվեր միացումները ճանապարհի երկայնքով առկա սպառողներին և ճանապարհի երթևեկամասի տակ գտնվող ճանապարհաշինական աշխատանքներին խոչընդոտող հին խողովակները ապամոնտաժվել, ավարտի ժամկետը ժամանակավորապես երկարաձգվել է մինչև 2021 թվականի մայիսի 31-ը, հետագա վերանայման հնարավորությամբ: 2021 թվականի մայիսի 31-ի, ինչպես նաև 30.09.2021 թվականի դրությամբ ջրատարի տեղափոխման աշխատանքները ամբողջությամբ չի ավարտվել, իսկ այդ աշխատանքների կատարման գծով ավարտի ժամկետի երկարացում չէր կատարվել: Պայմանագրի փոփոխմամբ նախատեսված աշխատանքները սահմանված ժամկետում չկատարելու համար ՊԸՊ-ի և Հատուկ Պայմանների 8.7 կետի համաձայն, Պատվիրատուն կապալառուների նկատմամբ չի հաշվարկվել վնասների փոխհատուցում ժամկետից ուշացած յուրաքանչյուր օրվա համար, չկատարված աշխատանքի գումարի

/142,106.7 հազ. դրամ/ 0.1 տոկոսի չափով (առավելագույնը պայմանագրի արժեքի 10 տոկոսի չափով):

**Հաշվեքննվող օբյեկտի աարկությունները և բացառությունները**

Թեև պատվիրատուն իրացնելով իր պայմանագրային իրավունքը՝ Պայմանագրի 2.5 և 8.7 կետերի համաձայն 19.11.2020թ. N01/03.5.1/1869-2020, N01/03.5.1/1870-2020 և N01/03.5.1/1871-2020 գրություններով կապալառուներին Պահանջի Ծանուցումներ էր ներկայացրել, սակայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ աշխատանքների կատարման ժամկետի երկարացման դեպքում միաժամանակ և՛ պայմանագրի երկարացում, և՛ ուշացման վնասներ չի կարող պահանջվել, այսինքն՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ պատվիրատուի նախաձեռնությամբ պայմանագրի երկարաձգումը ինքնին պատվիրատուին զրկում է ուշացման վնասներ պահանջելու իրավունքից

**Հաշվեքննողի մեկնաբանությունը՝**

Չի ընդունվում քանի որ

- կապալառուներին ծանուցելու վերաբերյալ հիշատակված գրությունները ընդհանրապես կապ չունեն արձանագրվածի հետ:

- Հղում չի արվել այն օրենսդրական կամ ենթօրենսդրական նորմատիվ իրավական ակտի, պայմանագրի հոդվածին (մասին, կետին) համաձայն որի փոխադարձ համաձայնությամբ պայմանագրի երկարացումը ինքնին պատվիրատուին զրկում է ուշացման վնասներ պահանջելու իրավունքից: Համաձայն ՊԸՊ-ի 8.7 կետի 2-րդ պարբերության, ժամկետից ուշացած օրերի համար հաշվարկված վնասների փոհատուցումը չի ազատում կապալառուին աշխատանքներն ավարտելուց և իր մնացած պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

**6.2 (1049-11001) «Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ»**

**6.2.1 Առկա է անհամապատասխանություն «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 8-րդ և 9-րդ մասերի պահանջների հետ**

Համաձայն «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 8-րդ և 9-րդ մասերի.

- միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները նրանք են, որոնք կապում են ՀՀ ճանապարհային ցանցը այլ պետությունների ավտոմոբիլային ճանապարհների ցանցին և ապահովում են միջազգային տրանսպորտային հաղորդակցություն,

- ինչպես նաև խոշոր բնակավայրերի, օդանավակայանների, պատմական հուշարձանների, լեռնանցքների մոտեցումներն ու շրջանցները և տրանսպորտային հանգույցները, որոնք չունեն առանձին պայմանանիշ:

- Մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհները նրանք են, որոնք կապում են հանրապետության գյուղական բնակավայրերը միմյանց, այլ քաղաքների, հանրապետական և միջպետական նշանակության ճանապարհների հետ:

ՀՀ կառավարության 13.02.2014թ թիվ 265-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների ցանկով որպես միջպետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից:

➤ 565.1 կմ ավտոճանապարհները հանդիսանում են հանրապետական նշանակության ճանապարհներ (կապում են ՀՀ ճանապարհային ցանցը այլ պետությունների ավտոմոբիլային ճանապարհների ցանցին, սակայն չեն ապահովում միջազգային տրանսպորտային հաղորդակցություն, հանրապետության քաղաքները մայրաքաղաքին, միմյանց և միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին): Նշված ավտոճանապարհներից ինն ամսվա ամառային պահպանությունում ներառվել են 453.44 կմ, իսկ ձմեռային պահպանությունում՝ 497.12 կմ ավտոճանապարհներ, որոնց պահպանության համար հաշվարկվել են 527,985.70 հազ. դրամի կատարողականներ ( հավելվածներ 3, 4 և 4ա):

➤ 170.7 կմ ավտոճանապարհներ հանդիսանում են տեղական նշանակության ճանապարհներ (կապում են հանրապետության գյուղական բնակավայրերը միմյանց, այլ քաղաքների, հանրապետական և միջպետական նշանակության ճանապարհներին): Համաձայն ՀՀ կառավարության 13.02.2014 թ-ին թիվ 265-Ն 3-րդ կետի 2-րդ ենթակետի ա) պարբերության մարզային նշանակության ավտոճանապարհների պետական ճանապարհային մարմինը տնօրինման մասով ոչ թե ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն է այլ ՀՀ մարզպետներն են: Նշված ավտոճանապարհներից որպես միջպետական նշանակության ճանապարհներ ինն ամսվա ամառային պահպանությունում ներառվել են 121.1 կմ, իսկ ձմեռային պահպանությունում՝ 130.5 կմ երկարությամբ ճանապարհներ, որոնց պահպանության համար հաշվարկվել և վճարվել է 178,680.90 հազ. դրամի կատարողական ( հավելված 5 և 5ա):

26.9 կմ երկարությամբ ճանապարհներ, հանդիսանում են դաշտամիջյան ճանապարհներ, որոնց պահպանման աշխատանքները ՀՀ օրենսդրությամբ չի նախատեսվում և չի իրականացվում: Նշված ավտոճանապարհներից ինն ամսում 6.3 կմ ներառել են ընթացիկ ամառային և 21.3 կմ ընթացիկ ձմեռային պահպանման

աշխատանքներում և հաշվարկել են 14,337.70 հազ. դրամի կատարողականներ (հավելված 6 և 6ա):

### **Հաշվերնվող օբյեկտի ասարկությունները բացառությունները**

ՀՀ կառավարության 13.02.2014թ. N 265-Ն որոշումը ներկայում գործող նորմատիվ իրավական ակտ է, որն ունի պարտադիր բնույթ: Հիշյալ որոշումը ընդունվել է ղեկավարվելով “Ավտոմոբիլային ճանապարհների մասին” ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով և 6-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով և, քանի դեռ փոփոխության չի ենթարկվել բոլոր պետական մարմինները, ինչպես նաև այլ անձիք պարտավոր են պահպանել տվյալ որոշման պահանջները:

Նշված ավտոմոբիլային ճանապարհները ՀՀ կառավարության 13.02.2014թ. թիվ 265-ն որոշմամբ հաստատված ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների դասակարգման համաձայն հանդիսանում են միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ, ուստի տվյալ ավտոմոբիլային ճանապարհների սպասապկումն իրականացվել է միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների համար ՀՀ կառավարության 04.11.2010թ. թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխան:

### **Հաշվերնվող մեկնաբանությունը**

Չի ընդունվում քանի որ արձանագրությունում որևէ անհամապատասխանություն “Ավտոմոբիլային ճանապարհների մասին” ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի և 6-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների հետ չի արանագրվել: Անհամապատասխանություն է արձանագրվել Օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 8-րդ և 9-րդ մասերի պահանջների հետ:

Համաձայն “Ավտոմոբիլային ճանապարհների մասին” ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհները (բացառությամբ Երևանի միջով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների) գտնվում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ պետական ճանապարհային մարմնի) տնօրինության և կառավարման ներքո: Համաձայն ՀՀ կառավարության 13.02.2014թ. թիվ 265-ն որոշման 3-րդ կետի Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պետական ճանապարհային մարմին է սահմանվել՝

1) կառավարման մասով՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը.

2) տնօրինման մասով՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝ սույն որոշման հավելվածում նշված միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով՝ բացառությամբ Երևան քաղաքի տարածքում գտնվող՝ այդ ճանապարհների մաս հանդիսացող հատվածների:

Նշված անհամապատասխանությունը արձանագրվել է նաև 2020թ-ի հաշվեքննության արդյունքներով կազմված ընացիկ եզրակացությունում, որով ՀՀ կառավարությանը առաջարկվել է ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի «ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկը հաստատելու, ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմին սահմանելու, ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի թիվ 112-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 265-Ն որոշմամբ հաստատված՝ ըստ նշանակության դասակարգված ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ներառված ճանապարհների դասակարգումը համապատասխանեցնել «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերի պահանջներին:

### **6.2.2 Առկա է անհամապատասխանություն «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերի պահանջների հետ**

Համաձայն «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերի՝

Հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները նրանք են, որոնք կապում են հանրապետության քաղաքները մայրաքաղաքին և միմյանց, մշակույթային, հոգևոր կենտրոնների և միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հետ,

- խոշոր բնակավայրերի, օդանավակայանների, պատմական հուշարձանների, լեռնանցքների մոտեցումներն ու շրջանցները, ինչպես նաև տրանսպորտային հանգույցները, որոնք չունեն առանձին պայմանանիշ:

- Մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհները նրանք են, որոնք կապում են հանրապետության գյուղական բնակավայրերը միմյանց, այլ քաղաքների, հանրապետական և միջպետական նշանակության ճանապարհների հետ:

ՀՀ կառավարության 13.02.2014 թ-ին թիվ 265-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների ցանկով

որպես Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ դասակարգված ավտոճանապարհներից

➤ 592.1 կմ ճանապարհները հանդիսանում են մարզային նշանակության ավտոճանապարհներ: Նշվածներից ինն ամսում ձմեռային պահպանություն են իրականացրել 516.3 կմ, իսկ ընթացիկ ամառային պահպանություն՝ 444.1 կմ երկարությամբ ճանապարհահատվածների վրա, որոնց պահպանության համար կատարողականներով հաշվարկվել է 593,412.90 հազ. դրամ (հավելված 7 և 7ա):

➤ 58,7 կմ-ն դաշտամիջյան ճանապարհներ են, որոնց պահպանման աշխատանքները ՀՀ օրենսդրությամբ չի նախատեսվում և չի իրականացվում: Այս ճանապարհներից ինն ամսում ձմեռային պահպանման է հանձնվել 40.8 կմ, իսկ ամառային պահպանման՝ 36.1 կմ երկարությամբ ճանապարհահատվածներ: Ճանապարհահատվածների 2021թ.-ի ինն ամսվա պահպանության համար կատարողականներով հաշվարկվել է 34,754.20 հազ. դրամ (հավելված 8 և 8ա):

➤ 7.6 կմ-ն Հրազդան քաղաքի փողոց է, որի պահպանության համար 2021թ.-ի ինն ամսվա կատարողականներով հաշվարկվել է 9,310.50 հազ. դրամ:

#### **Հաշվեքննվող օբյեկտի առարկությունները բացատրությունները**

Նշված ավտոմոբիլային ճանապարհները ՀՀ կառավարության 13.02.2014թ. N 265-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների դասակարգման համաձայն հանդիսանում են հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ, ուստի տվյալ ավտոմոբիլային ճանապարհների սպասարկումն իրականացվել է ելնելով հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների համար ՀՀ կառավարության 04.11.2010թ. թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված պահանջներից:

#### **Հաշվեքննողի մեկնաբանությունը**

Համաձայն “Ավտոմոբիլային ճանապարհների մասին” ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհները (բացառությամբ Երևանի միջով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների) գտնվում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ պետական ճանապարհային մարմնի) տնօրինության և կառավարման ներքո: Համաձայն ՀՀ կառավարության 13.02.2014թ. թիվ 265-Ն որոշման 3-րդ կետի Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պետական ճանապարհային մարմին է սահմանվել՝

1) կառավարման մասով՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը.

2) տնօրինման մասով՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝ սույն որոշման հավելվածում նշված միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով՝ բացառությամբ Երևան քաղաքի տարածքում գտնվող՝ այդ ճանապարհների մաս հանդիսացող հատվածների:

Նշված անհամապատասխանությունը արձանագրվել է նաև 2020թ-ի հաշվեքննության արդյունքներով կազմված ընացիկ եզրակացությունում, որով ՀՀ կառավարությանը առաջարկվել է ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի «ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկը հաստատելու, ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմին սահմանելու, ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի թիվ 112-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 265-Ն որոշմամբ հաստատված՝ ըստ նշանակության դասակարգված ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ներառված ճանապարհների դասակարգումը համապատասխանեցնել «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերի պահանջներին:

### **6.2.3 Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 04.10.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ աստատված «Կարգ»-ի 11-րդ կետով սահմանված պահանջների հետ:**

Համաձայն «Կարգ»-ի 11-րդ կետի պահանջի «...միայն պահպանման աշխատանքների կատարման արդյունքում ավտոմոբիլային ճանապարհի խումբը չի կարող փոխվել դեպի բարձր խմբի: Ավտոմոբիլային ճանապարհի խմբի փոփոխությունը դեպի ավելի բարձր խումբ կատարվում է միայն տվյալ ավտոմոբիլային ճանապարհի հիմնական, միջին նորոգումից կամ վերակառուցումից հետո...»

Հ36, Մ-4-Իջևան-Նավուր-Բերդ-Այգեպար ճանապարհահատվածի 21.1 կմ հատվածը (կմ42.1-կմ63.2) ըստ վիճակի 2021թ.-ի սպասարկման համար գնահատվել է «բավարար» և սպասարկվում է որպես ՀԲ(II) «միջին» սպասարկման մակարդակով: 2019թ և 2020թ համար կատարված ավտոճանապարհների վիճակների գնահատմամբ նշված ճանապարհի կմ 42.1-կմ45.2 և կմ56.3-կմ57.0 (3.8 կմ ) վիճակը գնահատվել է «հանրապետական վատ»: Առանց ավտոմոբիլային ճանապարհին հիմնական, միջին նորոգում կամ վերակառուցում իրականացնելու ճանապարհահատվածի վերոնշյալ հատվածը (3.8 կմ) ըստ վիճակի 2021թ.-ի պահպանման համար գնահատվել է «բավարար»: Հարկ է նշել, որ բավարար ճանապարհահատվածի «միջին» պահպանման մակարդակը «թույլատրելի»

պահպանման մակարդակից երկու մակարդակով բարձր պահպանման մակարդակ է և որին ներկայացվող պահանջները ավելի բարձր են և «թույլատրելի» պահպանման մակարդակի գները կազմում են «բավարար» պահպանման մակարդակի գների ընդամենը 44.8%-ը: 2021թ-ի ինն ամսվա ընթացիկ ամառային պահպանման համար առանց հիմնավորման ճանապարհի վիճակը «վատ»-ից փոխել են «բավարար»-ի, ինչի արդյունքում ավել են վճարել 2,066.70 հազ. դրամ:

Հ38, Հ30-Թթուջուր-Նավուր-Հ36 40.1 կմ ճանապարհահատվածի խումբը ըստ վիճակի գնահատվել է «վատ» և 2021թ.-ին սպասարկվում է որպես ՀՎ(III) «թույլատրելի» սպասարկման մակարդակով, սակայն կիրառել են «հանրապետական բավարար» ճանապարհահատվածի «միջին» պահպանման մակարդակի միավորի գները: Պատվիրելով «թույլատրելի» պահպանման մակարդակ, սակայն կիրառելով ավելի բարձր մակարդակի՝ «բավարար» պահպանման մակարդակի գները՝ 2021թ.-ի ինն ամսվա կատարողականներով ավել են հաշվարկել 21,809.00 հազ. դրամ»:

Հ-70/Մ-6/ Մարց-Աթան կմ 0+000 – կմ 29+100 ճանապարհի խումբը ըստ վիճակի 2021թ.-ի սպասարկման համար գնահատվել էր «վատ»: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ կառավարության 13.02.2014 թվականի թիվ 265-Ն որոշման համաձայն տվյալ ճանապարհի ընդհանուր երկարությունը կազմում է 27.5 կմ, որը 2021թ.-ին սպասարկվում է ՀԲ(II) «միջին» սպասարկման մակարդակով, կիրառելով ավելի բարձր՝ «բավարար» պահպանման մակարդակի գները, ինչի արդյունքում 2021թ.-ի ինն ամսվա ընթացիկ ամառային պահպանման համար կատարողականներով ավել է հաշվարկել 16,297.71 հազ. դրամ»:

Հ73, Մ-4 Պարզ լիճ կմ 0.0 – կմ 0.3 հատվածը 2020թ.-ին գնահատված է եղել որպես «վատ»: 2021թ.-ի պահպանման համար տվյալ հատվածը գնահատվել է ՀԼ(I) «միջին» սպասարկման մակարդակով, կիրառելով ավելի բարձր մակարդակի՝ «բավարար» պահպանման մակարդակի գները: Արդյունքում 2021 թվականի ինն ամսվա ընթացիկ ամառային պահպանման համար կատարողականներով ավել են հաշվարկել 94.6 հազ. դրամ:

#### **Հաշվեքննվող օբյեկտի առարկություններն ու բացառությունները**

“Թույլատրելի” պահպանման մակարդակ սահմանվել է նախարարության պահանջով, քանի որ դա պայման էր միջազգային կառույցների կողմից՝ վարկ տրամադրելու համար: Նոր հնգամյա մրցույթի պայմաններում այդ մակարդակը կսահմանվի: Իրականում 1.0 կմ ավազակոպձային ծածկի պահպանումը ավելի ծախսատար է՝ ինչը հիմնականում բացառվում է /հեշտությամբ կարելի է հիմնավորել/ այն պահպանելու տեխնոլոգիական գործողությունների հաճախականությամբ: Հաջորդ հնգամյա մրցույթում կներառվի նաև “Վատ” վիճակի ճանապարհահատվածների “Թույլատրելի” սպասարկման մակարդակով 1 միավորի գինը: Հ73, Մ4 Պարզ լիճ հանրապետական նշանակության

ավտոճանապարհի կմ0-կմ2.9 ճանապարհահատվածը հիմնանորոգվել է այլ գերադասության կողմից /Մոնթե Մելքոնյան վարժարան փանդ հատված/ և որոշ ժամանակ անց հատվածը ներառվել է ընթացիկ ամառային պահպանման ցանկում: Թյուրիմացաբար նախորդ փարվա պահպանման ծրագրում ներառվել էր 2.6 կմ հատվածը: Իրականում կմ0-կմ0.3 հատվածը լավ վիճակում է: Մ-4 ճանապարհից դեպի Պարզ լիճ երթևեկությունը իրականացվում է նշված 0.3կմ հատվածից, ինչն <-73 ճանապարհի երկարությունը նվազեցնում է 1.3 կմ-ով: Այս հանգամանքը թույլ է տալիս զգալի միջոցներ խնայել: <-70 Մարգ-Աթան կմ0+000-կմ-27.5 հատվածը /իրականում 27,5 կմ է, սակայն մեր կողմից թյուրիմացաբար գնահատվել է 29.1կմ: Ճանապարհը իրականում "բավարար" վիճակում է, սակայն մեր կողմից իրականացրած դաշտային աշխատանքների հաշվարկներում սխալմամբ գնահատվել է որպես "վատ", սակայն համաձայնագրում ներառված է որպես "Բավարար": Այս ամենը ֆինանսական հետևանքներ չի առաջացրել, քանի որ "Վատ" "Թույլատրելի" ճանապարհահատվածի 1կմ-ի ամառային սպասարկման գինը ընդունվել է հավասար "բավարար" "միջին" 1կմ ճանապարհահատվածի սպասարկման գնին: Նմանապիսի սխալները ինքնաբերաբար կվերանան, քանի որ 2022-2026 թթ-ի ճանապարհների պահպանման պայմանագրերում սահմանված է նաև "վատ" "Թույլատրելի ճանապարհահատվածի 1-կմ-ի ամառային սպասարկման գինը:

Հաշվեքննողի մեկնաբանությունը

Ըստ էության առարկություն չի ներկայացվել, իսկ բացատրությունը չի ընդունվում քանի որ

-Նախարարությունը իրավասու չէ պահանջել որևէ պահպանման մակարդակի սահմանում, պահպանման մակարդակները սահմանվում են է << կառավարության 04.10.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Կարգ»-ով:

- Ընդհանրապես անհասկանալի է ինչ վարկի տրամադրման, ինչ միջազգային կառույցների և ինչ պահանջների մասին է հիշատակվում բացատրություններում: Նշվածները հիմնավորող որևէ փաստաթուղթ հաշվեքննության ընացքում և առարկություններին և բացատրություններին կից չի ներկայացվել:

-2ի նշվել թե <73, Մ4-Պարզ լիճ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0-կմ2.9 ճանապարհահատվածը որ **<<այլ գերադասության>>** կողմից է հիմնանորոգվել: 2ի ներկայացվել այդ փաստը հիմնավորող որևէ փաստաթուղթ: Համաձայն <<Ավտոմոբիլային ճանապարհների մասին>> << օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների նախագծման, շինարարության, նորոգման և պահպանման, ինչպես նաև ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի շինարարության (տեղադրման), շահագործման, նորոգման և պահպանման ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին: Բյուջետային ծախսային ծրագրերի գլխավոր կարգադրիչը պետական ճանապարհային մարմինն է: Համաձայն << կառավարության 13.02.2014թ. թիվ 265-ն որոշման 3-րդ կետի Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային

ճանապարհների պետական ճանապարհային մարմին է սահմանվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը:

**6.2.4 Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 13.02.2014թ.-ին թիվ 265-Ն որոշման 4-րդ կետի 2)-րդ ենթակետով սահմանված պահանջների հետ:**

ՀՀ կառավարության 13.02.2014թ.-ին թիվ 265-Ն որոշման 4-րդ կետի 2)-րդ մասով սահմանվել է, որ Գյումրի, Վանաձոր, Կապան, Իջևան, Վաղարշապատ և Արմավիր քաղաքների տարածքներում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մաս հանդիսացող հատվածների **միայն երթևեկելի մասի ծածկի ընթացիկ նորոգման և ձմեռային պահպանության աշխատանքներն են իրականացվում** ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից:

**6.2.4.1 Գյումրու, Վանաձոր և Վաղարշապատ** քաղաքների տարածքներում գտնվող՝ ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մաս հանդիսացող հատվածների երթևեկելի մասի ծածկի ընթացիկ նորոգման և ձմեռային պահպանության աշխատանքները չեն ներառվել 2021թ. ձմեռային և ընթացիկ պահպանման աշխատանքների համաձայնագրերում և այդ ճանապարհահատվածների պահպանությունն իրականացվել է համայնքների կողմից:

**6.2.4.2 Կապան, Իջևան և Արմավիր** քաղաքների տարածքներում գտնվող 21.5 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհները ընդգրկվել են ձմեռային և ընթացիկ պահպանման համաձայնագրերում: Համաձայն ՀՀ կառավարության 04.11.2010թ թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված Կարգի 2-րդ կետի, ավտոմոբիլային ճանապարհների պահպանման հիմնական խնդիրն է՝ մշտապես ապահովել ավտոմոբիլային ճանապարհների՝ արհեստական կառույցների, **հողային պասսիանի**, տրանսպորտային հանգույցների, կահավորանքի և ինժեներական շինությունների (այսուհետ՝ ավտոմոբիլային ճանապարհ) պահպանվածությունն այնպիսի վիճակում, որը համապատասխանում է անվտանգ և անխափան երթևեկության ապահովման պահանջներին: Համաձայն նույն կարգի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի ընթացիկ պահպանում դա ավտոմոբիլային ճանապարհների ամբողջ երկայնքով ճանապարհի օտարման շերտի սահմաններում **հողային պասսիանի**, արհեստական կառույցների, տրանսպորտային հանգույցների, կահավորանքի և ինժեներական շինությունների նկատմամբ իրականացվող համալիր հիմնական գործողություններն են: Համաձայն «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի, **հողային**

**պաստառը** օտարման շերտի մաս է, որն ընդգրկում է ճանապարհի *երթևեկամասը, մայթերը, հարակից հեծանվային ուղիները, կողային առուները, կողնակները և բաժանիչ գոտին*: Պահպանման աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրերի հավելված 1-ում՝ տեխնիկական բնութագրերի 4-րդ կետի 2-րդ մասով սահմանվել է, որ կապալառուն պետք է ապահովի սպասարկվող ավտոճանապարհի **հողային պաստառի**, օտարման շերտի, երթևեկելի մասի պահպանվածությունը: Հետևաբար՝ կապալառուն առաջարկած 1 կմ-ի միավոր գնով պետք է իրականացնել պայմանագրում սահմանված և տեղում առկա հողային պաստառի բոլոր էլեմենտների պահպանումը, և քանի որ նշված վայրերում իրականացվել է միայն երթևեկելի մասի պահպանում, ուստի կատարողականով պետք է վճարվել միայն դրա գումարը Կարգի աղյուսակ 4-ում սահմանված մասնաբաժնով, համաձայն որի ընթացիկ ամառային պահպանման ցուցանիշների ապահովման ընդհանուր արժեքում ծածկը (երթևեկելի մասի) կազմում է ընդամենը 43%-ը, իսկ ընթացիկ ձմեռային պահպանման ժամանակ՝ 65%, հետևաբար նշված ճանապարհների ամառային պահպանման աշխատանքների համար պետք է հաշվարկվել պայմանագրային գնի 43%-ը, իսկ ձմեռայինի դեպքում՝ 65%), ինչը չի կատարվել և ինչի արդյունքում 2021թ.-ի ինն ամսվա ընթացքում ավել է հաշվարկվել 14,312.7 հազ. դրամ (հավելված 2): Ընդ որում՝ այդ հատվածների մայթերի, կողային առուների, կողնակների պահպանումն իրականացվել է Քաղաքապետարանների պատվերներով և դրանց համար վճարվել է համայնքային բյուջեներից:

### **Հաշվերնվող օբյեկտի առարկությունները և բացառությունները**

Մրցույթում միավոր գնի ներկայացման համար կապալառուն նախապես ուսումնասիրում է տվյալ տարածաշրջանի ճանապարհները, հաշվարկում է դրանց պահպանման ծախսերը և ներկայացնում է ճանապարհների 1.0կմ-ի պահպանման միջինացված գինը: Յուրաքանչյուր կմ-ում տարբեր են արհեստական կառույցների նշանների քանակը, ծածկի, կողնակի կամ մայթերի լայնությունների մեծությունները և յուրաքանչյուր կմ-ի համար մրցույթին առանձին գին սահմանելը իրագործելի չէ: Նենք, որ քաղաքային պայմաններում շատ գործոններ դժվարեցնում և ավելի ծախսատար են դարձնում պահպանման աշխատանքները: Մայթում միավոր գնի ներկայացման ժամանակ կապալառուի կողմից այս ամենը հաշվի է առնվել:

«Կառավարության 04.11.2010 թվականի թիվ 1419-Ն որոշման հավելվածի ընթացիկ ամառային պահպանման ցուցանիշների ապահովման աղյուսակ 4-ում արտացոլված է թերացումների համար պահվող գումարների չափը: Այդ տրոկոսները չեն արտացոլում պահպանման միավոր գնի գոյացման համամասնությունները:

### **Հաշվերնողի մեկնաբանությունը**

Չի ընդունվում քանի որ կապալառուն առաջարկած 1 կմ-ի միավոր գնով պետք է իրականացնել պայմանագրում սահմանված և տեղում առկա հողային

պաստառի բոլոր էլեմենտների պահպանումը, և քանի որ նշված վայրերում իրականացվել է միայն երթևեկելի մասի պահպանում, ուստի կատարողականով պետք է վճարվեր միայն դրա գումարը: Նշվածի մանրամասը հիմնավորումները հղումներով ներկայացված են անհամապատասխանության նկարագրությունում:

**6.2.5 Առկա է անհամապատասխանություն միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների 2021 թվականի պահպանման համար կնքված համաձայնագրերի և 2021 թվականի համար միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման մակարդակների գնահատման ակտերի միջև:**

Հ - 92, Հ - 32 - Մարմաշենի վանական համալիր ճանապարհի երկարությունը 2.3 կմ է, որից պահպանման համար 2021 թվականին գնահատվել է կմ 0 – կմ 2.0 հատվածը, որպես բավարար (ճանապարհահատվածի փոսայնության տոկոսը կազմել է 1.4%): 2021 թվականի պահպանման համար համաձայնագրում ներառվել է կմ 0 - կմ 2.3 հատվածը, որպես «վատ» թույլատրելի սպասարկում պահանջվող մակարդակով: Համաձայնագրով 1 կմ ճանապարհի ընթացիկ ամառային պահպանման գինը 2021 թվականի համար սահմանվել է 1,320.0 հազ. դրամ, այն ինչ «բավարար» վիճակի ընթացիկ ամառային պահպանման գինը միջին սպասարկում պահանջվող մակարդակով 2021թ. համար կազմել է 1,258.32 հազ.դրամ: Տարբերությունը 2021 թվականի ինն ամսվա համար կազմել է 120.6 հազ. դրամ:

**Հաշվեքննվող օբյեկտի առարկությունները և բացառությունները**

Հ-92, Հ-32 Մարմաշեն ճանապարհի մասով ընդունված է ի գիտություն: Հաջորդ ամիսների կատարողական ակտերում ավել կատարված վճարումները արդեն վերականգնվել են ամբողջ տարվա կտրվածքով /61680դր\*2.3= 141,864դրամ/:

**6.2.6 Առկա է անհամապատասխանություն ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող մետաղական արգելափակոցների 2021 թվականի պահպանման համար կնքված համաձայնագրերի և 2021 թվականի համար պահպանման մակարդակների գնահատման ակտերի միջև:**

2021 թվականի պահպանման համար Սյունիքի մարզում գնահատվել է 139,517 գծմ. մետաղական արգելափակոց, որից որպես լավ-123,073 գծմ., բավարար-16,444 գծմ: Պահպանման է հանձնվել 140,359 գծմ արգելափակոց, կամ 842 գծմ. ավել:

**Հաշվեքննվող օբյեկտի առարկությունները և բացառությունները**

Սյունիքի մարզի մասով ընդունված է ի գիտություն: Հաջորդ ամիսների կատարողական ակտերում ավել կատարված վճարումները կվերականգնվեն ամբողջ տարվա կտրվածքով /842գծմ\*1365=1,149,330/:

**6.2.7 Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 01.01.2008 թվականի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ճանապարհային գծանշանը ներկայացվող պահանջները, դրա կիրառման կանոններ»-ի 22-րդ կետով սահմանված պահանջների հետ:**

ՀՀ կառավարության 10.01.2008թ-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ճանապարհային գծանշանը ներկայացվող պահանջները, դրա կիրառման կանոններ»-ի 22-րդ կետի պահանջի համաձայն ճանապարհների գծանշումը, բացառությամբ 4-րդ կարգի ճանապարհներինը, պետք է կատարվեր լուսանդրադարձիչ նյութի կիրառմամբ: Բացի այդ որոշմամբ սահմանվել է նաև, չոր վիճակում գծանշան համար պայծառության, չոր ծածկույթի դեպքում օրվա մութ ժամերի պայմանների համար լուսանդրադարձման, անձրևի և թաց ծածկույթի դեպքում օրվա մութ ժամերի պայմանների համար լուսանդրադարձման և չոր վիճակում ցրված լույսի կամ արհեստական լուսավորության դեպքում լուսարտացումն գործակիցներ:

Պատվիրատուի կողմից աշխատանքներն ընդունելիս չեն ստուգվել վերը նշված պայծառության, լուսանդրադարձման և լուսարտացումն գործակիցները: Բացի այդ, որևէ փաստաթղթով (սերտիֆիկատ, անձնագիր և այլն) չեն հիմնավորվել աշխատանքներն իրականացնելիս օգտագործված ներկանյութերի վերը նշված կանոններով սահմանված պայծառության, լուսանդրադարձելիության և լուսարտացումն ապահովման հնարավորությունը:

**Հաշվեքննվող օբյեկտի առարկությունները և բացառությունները**

Գործող լաբորատորիան չունի հնարավորություն որոշելու գծանշան պայծառության, լուսանդրադարձման և լուսարտացումն գործակիցները:

**6.2.8 Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 04-ի «ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2004 թ դեկտեմբերի 9-ի N 1942-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված Կարգի 22-րդ և 24-րդ կետերի պահանջների հետ:**

Համաձայն Կարգ-ի 22-րդ և 24-րդ կետերի պահանջների ընթացիկ տարվա մինչև հուլիսի 15-ը հաջորդ տարվա բյուջետային հայտի նախապատրաստման համար պատասխանատուի կողմից կատարվում է ավտոմոբիլային ճանապարհների վիճակի նախնական գնահատում և պահպանման մակարդակների որոշում, որը

ճշգրտվում է մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 1-ը: Ուսումնասիրության և գնահատման վերաբերյալ պատասխանատուի կողմից նախապատրաստվում, ստորագրվում և ամսագրվում է ճանապարհների վիճակի և պահպանման մակարդակների գնահատման ակտ ըստ ձև 1-ի, որը հաստատվում է տվյալ ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմնի ղեկավարի կողմից:

2021 թվականի համար Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների վիճակի ու դրանց պահպանման մակարդակների գնահատման ակտերը պետական կառավարման մարմնի ղեկավարի կողմից չեն ստորագրվել, չեն նշվել կազմման տարին, ամիսը և ամսաթիվը: Ակտերը հաստատվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից 24.02.2021 թվականին թիվ 230-Ա հրամանով, իսկ «պետության կարիքների համար Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման» Համաձայնագրերը կապալառու կազմակերպությունների հետ կնքվել են փետրվարի 18-ին և 19-ին: Այսինքն՝ Համաձայնագրերում նշել են պահպանման տրված ավտոճանապարհների վիճակ և սպասարկման մակարդակ, չունենալով հաստատված այդ մակարդակները և վիճակները: Բացի այդ 2021 թվականի հունվար ամսին պահպանում իրականացնող ընկերությունները պահպանում են իրականացրել և ապահովել սահմանված չափանիշները, չունենալով այդ չափանիշները՝ սահմանված պահպանում պահանջող մակարդակները, իսկ պատվիրատուն ընդունել է այդ աշխատանքները ավտոմոբիլային ճանապարհների պահպանման միջանկյալ դիտարկումների ամփոփագրերում նշելով ճանապարհի պահպանման պահանջվող մակարդակներ չունենալով այդ մակարդակները:

#### **Հաշվեքննվող օբյեկտի առարկությունները և բացառությունները**

“ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և անվտանգ երթևեկությամբ ծառայություններ” ծրագրի համար անհրաժեշտ է, որպեսզի նախ ՀՀ կառավարության կողմից հաստատվեն և ուժի մեջ մտնեն հաջորդ տարվա պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումները, այդ թվում միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների սպասարկման համար նախատեսվող ծախսերի կատարման եռամսյակային /աճողական/ համամասնությունների քաղվածքը: Բացի այդ՝ անհրաժեշտ է որպեսզի հաստատվի տվյալ տարվա հիմնանորոգման ենթակա ճանապարհահատվածների ցանկը: Նշված միջոցառումների ավարտից հետո անհրաժեշտ է կազմակերպել գնման գործընթաց /համաձայնագրերի, վճարման ժամանակագրույցի կազմման, ստորագրման գործընթաց/, որը նույնպես լրացուցիչ ժամանակ է պահանջում: Նկատի ունենալով

նշված օբյեկտիվ խնդիրները՝ միջպետական, հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանման անընդհատությունն ապահովելու նպատակով կապալառու կազմակերպություններին տրամադրվում է ավտոմոբիլային ճանապարհների պահպանման մակարդակների չափանիշները՝ մինչև համաձայնագրի կնքումը:

Հաշվեքննողի մեկնաբանությունը:

Աձրանագրված անհամապատասխանության վերաբերյալ առարկություն չի ներկայացվել: Ներկայացվել են բացատրություններ որոնք չեն ընդունվում քանի որ բացատրություններում շարադրվածը որևէ օրենսդրական կամ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով չի հիմնավորվել: ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վիճակի գնահատման և ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների որոշում կարգը սահմանված է է ՀՀ կառավարության 2004 թ դեկտեմբերի 9-ի N 1942-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված Կարգով ինչին և հղում է կատարվել անհամապատասխանությունն արձանագրելիս:

**6.2.9 Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 26.11.2020թ-ի «ՀՀ կառավարության 2010թ նոյեմբերի 4-ի թիվ 1419 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և գնման պայմանագրերում լրացումներ կատարելու թույլտվություն տալու մասին» թիվ 1864Ն որոշման 1-ին մասի 4-րդից 11-րդ կետերի պահանջի հետ**

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 24.02.2011 թվականի թիվ 79-Ն հրամանով հաստատվել է «ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող պարսպող հարմարանքների (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների կատարման և դրանց ընդունման կարգը»: ՀՀ կառավարության 26.11.2020 թվականի «ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 1419 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և գնման պայմանագրերում լրացումներ կատարելու թույլտվություն տալու մասին» թիվ 1864-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման կարգում կատարվել են փոփոխություններ և սահմանվել մետաղական արգելափակոցների գնահատման պահպանման ու դրանց ընդունման կարգը: Չնայած վերոնշյալ որոշումը ուժի մեջ է մտել 2020 թվականի նոյեմբերի 27-ին, մինչ օրս ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 24.02.2011 թվականի թիվ 79-Ն հրամանը, որով հաստատվել էր «ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման

հանձնվող պարսպող հարմարանքների (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների կատարման և դրանց ընդունման կարգ»-ը, ուժը կորցրած չի ճանաչվել:

**Հաշվեքննվող օբյեկտի առարկություններն ու բացառությունները**

Ճանապարհների պահպանման առաջիկա հնգամյա պայմանագրերի նկատմամբ մեքադական արգելափակոցների մասով կկիրառվեն 04.11.2010թվականի թիվ 1419-Ն որոշման Ձեռ կողմից նշված փոփոխությունները և միաժամանակ սահմանված կարգով ուժը կորցրած կճանաչի ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 24.02.2011թվականի թիվ 79-Ն հրամահը:

**6.2.10 Առկա է անհամապատասխանություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին կետի և 469-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջի հետ:**

«Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ» ծրագրով պայմանագրերի 93 %-ը կնքվել են 2015 թվականի դեկտեմբեր ամսին: Համաձայն կնքված պայմանագրերի 1.2 կետի պայմանագրերի կատարման ժամկետ է սահմանվել մինչև 31.12.2020 թվականը ներառյալ:

ՀՀ կառավարության 10.12.2020 թվականի «Գնման պայմանագրերում փոփոխություն կատարելու մասին» թիվ 2045-Ա որոշման 1-ին կետով թույլատրվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների վրա գտնվող առանձին պահպանման հանձնվող կամուրջների, թունելների, պարսպող հարմարանքների (մետաղական արգելափակոցներ) պահպանման, միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ծածկի հորիզոնական և ուղեանցների հենարանների ուղղաձիգ նշագծման աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգել մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին կետի և 469-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն պայմանագրի փոփոխությունը իրականացվում է պայմանագրի փոփոխության համաձայնության կնքմամբ և պայմանագրի փոփոխման դեպքում պարտավորությունները փոփոխված են համարվում պայմանագրի փոփոխման մասին կողմերի համաձայնությունը կնքելու պահից:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից վերը նշված պայմանագրերում փոփոխություններ և պայմանագրերով սահմանված աշխատանքների ավարտի ժամկետների երկարացումներ չեն կատարվել, սակայն 2021 թվականի փետրվարին կնքվել են այդ պայմանագրերի համաձայնագրեր, որոնցով փոփոխվել են պայմանագրային գները՝ ավելացնելով

2021 թվականի աշխատանքների գները և սահմանել 2021թ գնման ու **վճարման ժամանակացույցերը:**

Վերը նշված որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվել է, որ «պայմանագրերում փոփոխությունները կատարվում է հիմք ընդունելով **նույն պայմանագրերի կնքման օրվա դրությամբ** գործող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները» այնինչ ինչպես արդեն նշել ենք վերևում պայմանագրերը կնքվել են 2015 թվականին և պայմանագրերի կնքման օրվա դրությամբ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն **որոշումը գոյություն չի ունեցել:**

Չնայած այն հանգամանքին, որ վերը նշված ՀՀ կառավարության 26.11.2020 թվականի «**ՀՀ կառավարության 2010 թվական նոյեմբերի 4-ի թիվ 1419 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և գնման պայմանագրերում լրացումներ կատարելու թույլտվություն տալու մասին**» թիվ 1864Ն որոշման 2-րդ կետով սահմանվել էր, որ սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գործող Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող, առանձին պահպանվող մետաղական արգելափակոցների պահպանման աշխատանքների կատարման կապալի պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո լրացումներ կատարել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գործող Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման կապալի պայմանագրերում՝ այնտեղ ներառելով համապատասխան տարածաշրջանի ավտոմոբիլային ճանապարհների վրա առկա մետաղական արգելափակոցների պահպանման աշխատանքները՝ հիմք ընդունելով համապատասխան Պայմանագրերով նախատեսված 1 գծմ մետաղական արգելափակոցի պահպանման աշխատանքների համար սահմանված արժեքները, մետաղական արգելափակոցների պահպանման աշխատանքների կատարման կապալի պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո այդ աշխատանքները չեն ներառվել պահպանման աշխատանքների կատարման կապալի պայմանագրերում, մետաղական արգելափակոցների պայմանագրերում չեն կատարել աշխատանքի ավարտի ժամկետների փոփոխություններ, սակայն 2021թ կնքել են պայմանագրերի Համաձայնագրեր որոնցով սահմանել են 2021թ կատարելիք աշխատանքների ծավալները գնման և վճարման ժամանակացույցերը:

**Հաշվեքննվող օբյեկտի առարկություններն ու բացառությունները**

1. Որոշման մեջ հղումը տրված է Պայմանագրերի կնքման օրվա դրությամբ գործող ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի թիվ 526-ն որոշմամբ հաստատված՝ գնումների գործընթացի կազմակերպման կարգին, որը Պայմանագրի կնքման օրվա դրությամբ հաստատված է եղել ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-ն որոշմամբ:

2. 18.02.2021թվականի համաձայնագրերի նախաքանում սահմանված է, որ փոփոխությունները կատարվում են ղեկավարվելով ՀՀ կառավարության 2020թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 2045 –Ա որոշմամբ, որով սահմանված է, որ պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվում է մինչև 2021թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

### **Հաշվեքննողի մեկնաբանությունը**

Չի ընդունվում քանի որ

- 2017թվականի մայիսի 4-ի թիվ 526-ն որոշմամբ հաստատված՝ գնումների գործընթացի կազմակերպման կարգին, չի կարող հաստատված լինել ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-ն որոշմամբ:

- 18.02.2021 թվականի համաձայնագրերով չեն կատարվել պայմանագրի փոփոխություններ և չեն երկարաձգվել աշխատանքների կատարման ժամկետները:

**6.2.11 Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 13.02.2014թ. -ի թիվ 265-Ն որոշմամբ հաստատված ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկի հետ:**

Ընթացիկ ամառային պահպանման ավտոմոբիլային ճանապարհների ընդհանուր երկարությունը տարեկան ճշտված պլանով հաշվարկվել է 3843.1 կմ, ձմեռային պահպանման ճանապարհների ընդհանուր երկարությունը՝ 4265.6 կմ այնինչ համաձայն ՀՀ կառավարության 13.02.2014թվականի թիվ 265-Ն որոշմամբ հաստատված ցանկի միջպետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 1753,12 կմ, հանրապետական նշանակության ավտոճանապարհներինը՝ 2000,11 կմ, ընդամենը 3753,23 կմ:

### **Հաշվեքննվող օբյեկտի արձագանքը**

Հաշվեքննիչ պալատի արձանագրված վերը նշված անհամապատասխանության վերաբերյալ առարկություններ չի ներկայացվել, արձանագրվածի վերաբերյալ „Ճանապարհային դեպարտամենտ” ՊՈԱԿ-ը ներկայացրել է հետևյալ պարզաբանումը:

Ճանապարհային դեպարտամենտի կողմից նման տվյալներ չի ներկայացվել: Պետք է ճշտել նախարարության ֆինանսատնտեսագիտական, հաշվապահական հաշվառման բաժնի հետ:

**6.3 (1049-11007) «Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման**

## **ներդրումային երկրորդ ծրագրի շրջանակներում ճանապարհային շինարարություն» ծրագիր**

**6.3.1** 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի տարեկան պլանով նախատեսվել է հատկացնել 5,239,167.80 հազ. դրամ, իսկ ճշտված պլանով 8,712,783.30 հազ. դրամ: 2021 թվականի ինն ամիսների ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 8,562,783.30 հազ. դրամ, ՀՀ 2021 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ՝ ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների հաշվետվության դրամարկղային ծախսը կազմել է 4.002,391.57, իսկ փաստացի ծախսը՝ 6,163,371.25 հազ. դրամ:

**6.3.2** ՀՀ 2021 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների» հաշվետվության համաձայն տարեկան պլանով և ճշտված պլանով, 2021 թվականի ինն ամիսների պլանով և ինն ամիսների ճշտված պլանով նախատեսվել էր իրականացնել Բաբաջանյան-Աշտարակի խճուղի 9.4 կմ երկարությամբ և 24 մ միջին լայնությամբ նոր ճանապարհահատվածի կառուցման աշխատանքների 25 %-ը: Փաստացի կատարվել է աշխատանքների 9.3%:

Տարեկան պլանով և ճշտված պլանով, 2021 թվականի ինն ամիսների պլանով և ինն ամիսների ճշտված պլանով նախատեսվել էր իրականացնել Արգավանդ-Շիրակ 2.7 կմ երկարությամբ ճանապարհահատվածի /ներառյալ Հրազդան գետի վրա կամուրջի/ կառուցման աշխատանքների 50 %: Փաստացի կատարվել է աշխատանքների 34.8%-ը:

### **Հաշվեքննության օբյեկտի կողմից անհամապատասխանության վերաբերյալ առարկություններ և պարզաբանումներ չի ներկայացվել:**

**6.4 (1157-12017) Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագիր**

**6.4.1 «Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագիր»-ի** համար ՀՀ պետական բյուջեից 2021 թվականին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1,033,101.80 հազ. դրամ: ՀՀ կառավարության 30.12.2020 թվականի թիվ 2215-Ն որոշման համաձայն 2021 թվականի ինն ամիսների ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1,029,791.5 հազ. դրամ: ՀՀ 2021 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ՝ ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների հաշվետվության դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 1,009,489.76 հազ. դրամ:

**6.4.2** «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ» ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների հավելվածի համաձայն «Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագիր»-ի աշխատանքների համար 2021 թվականի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1,033,101.8 հազ. դրամ, 2021 թվականի իննը ամիսների համար ճշտված պլանով նախատեսվել է կատարել 1,029,791.5 հազ. դրամի աշխատանքներ: Փաստացի կատարված աշխատանքների դիմաց վճարվել է 1,009,489.76 հազ դրամ: Փաստացի կատարված աշխատանքների և վճարման տարբերությունը կազմել է 20,301.74 հազ. դրամ:

**Հաշվեքննության օբյեկտի առարկությունները և բացառությունները**  
**Վարկային ծրագրի փաստացի ծախսերը նշված ժամանակահատվածի դրությամբ Ա և Բ տրանշների գծով կազմել է 926,712.46 հազ. դրամ: Ինն ամիսների ճշտված պլանով նախատեսված աշխատանքների և փաստացի վճարման տարբերությունը կազմել է 103,079.04 հազ. դրամ:**

#### **Հաշվեքննողի մեկնաբանությունը՝**

Հաշվեքննության համար տվյալները վերցվել են “ՀՀ 2021 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ՝ ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների ու «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ» հաշվետվություններից:

**6.5 (1157-12018) Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների դրամաշնորհային ծրագիր (Տրանշ Ա, Բ)**

**6.5.1 «Գյումրու քաղաքային ճանապարհների դրամաշնորհային ծրագիր (Տրանշ Ա, Բ)»-ի** համար ՀՀ պետական բյուջեից 2021 թվականին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1,957,130.10 հազ. դրամ: ՀՀ կառավարության 30.12.2020 թվականի թիվ 2215-Ն որոշման համաձայն 2021 թվականի իննը ամիսների ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1,661,417.60 հազ. դրամ: ՀՀ 2021 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ՝ ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների հաշվետվության դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 446,032.72 հազ. դրամ:

**6.5.2** «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման

վերաբերյալ» ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների հավելվածի համաձայն «Գյուճուրու քաղաքային ճանապարհների դրամաշնորհային ծրագիր (Տրանշ Ա, Բ)»-ի համար 2021 թվականի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1,957,130.0 հազ. դրամ, 2021 թվականի իննը ամիսների համար ճշտված պլանով նախատեսվել է կատարել 1,661,417.60 հազ. դրամի աշխատանքներ: Փաստացի կատարված աշխատանքների դիմաց վճարվել է 446,032.72 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի և փաստի տարբերությունը կազմել է 1,215,384.88 հազ. դրամ:

**6.5.3 ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ»** միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների հավելվածի համաձայն հունվար-սեպտեմբեր ամիսներին նախատեսված աշխատանքներից՝ Գյուճուրի Քաղաքի 219 փողոցների լուսավորության համակարգերը ավտոմատ կառավարման համակարգով արդիականացնելու աշխատանքներից՝ նախատեսվել է արդիականացնել 2877 հատ լուսակետ: Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսվել է արդիականացնել 2877 հատ լուսակետ, փաստացի իրականացվել է 1201 հատ լուսակետի արդիականացում կամ 1676 հատով պակաս:

**Հաշվեքննության օբյեկտի առարկություններն և բացառությունները**

Դրամաշնորհային ծրագրերի փաստացի ծախսերը նշված ժամանակահատվածի դրությամբ, Ա և Բ տրանշների գծով կազմել է 429,314.0 հազ. դրամ: Ինն ամիսների ճշտված պլանով նախատեսված աշխատանքների և փաստացի վճարման տարբերությունը կազմել է 1,232,103.6 հազ. դրամ:

**Հաշվեքննողի մեկնաբանությունը՝**

Հաշվեքննության համար տվյալները վերցվել են «ՀՀ 2021 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ՝ ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների ու «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ» հաշվետվություններից:

**6.6 (1157-12008) «Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացում»**

**6.6.1** Համաձայն «ՀՀ 2021 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ՝ ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների» հաշվետվության «Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների գծով պետության կողմից համայնքի

ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացում» ծրագրի շրջանակներում ՀՀ պետական բյուջեից 2021 թվականին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տարեկան պլանով և տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 2,862,392.60 հազ. դրամ սուբսիդիա, իսկ 2021 թվականի ինն ամիսների պլանով և նույն ժամանակաշրջանի ճշտված պլանով՝ 1,926,217.00 հազ. դրամ: Նշված ժամանակաշրջանի դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 1,916,216.95 հազ. դրամ:

6.6.2 «ՀՀ 2021 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների» հաշվետվության համաձայն ծրագրով հունվար-սեպտեմբեր ամիսներին փաստացի մետրոպոլիտենով փոխադրվել է 13,310,658 ուղևոր, նախատեսված 13,757,000 ուղևորի դիմաց, կամ 446,342 ուղևորով պակաս, այդ թվում՝ արտոնություններից օգտվող 698,981 ուղևոր, նախատեսված 1,217,000 ուղևորի դիմաց: Փոխադրման համար կատարված ծախսը կազմել է 1,916,216.95 հազ. դրամ նախատեսված 1,926,217.00 հազ. դրամից 10,000.05 հազ. դրամով պակաս:

### **Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություններ և բացառություններ չի ներկայացվել:**

#### **6.7 (1146-11001) «Տարրական ընդհանուր հանրակրթություն»**

«ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 30.12.2020 թվականի թիվ 2215-Ն որոշման 10-րդ կետի 1-ին ենթակետի և 03.02.2021 թվականի «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված մի շարք ծրագրերով Երևանի քաղաքապետին լիազորությունների պատվիրակման և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչի իրավունքների փոխանցման» Պայմանագիր N1-ի համաձայն «Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների» ծրագրի գծով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված իրավունքները փոխանցվել են Երևանի քաղաքապետարանին:

6.7.1 Համաձայն «ՀՀ 2021 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ՝ ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների» հաշվետվության տարրական ընդհանուր հանրակրթության ծառայություններ մատուցելու համար ՀՀ պետական բյուջեից 2021 թվականին նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է

հատկացնել 7,924,617.4 հազ. դրամ, որպես ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին սուբսիդիաներ: 2021 թվականի **ինն ամիսների** պլանով նախատեսել է հատկացնել 6,151,119.80 հազ. դրամ, իսկ ճշտված պլանով 6,128,554.00 հազ. դրամ., դրամարկղային ծախսը կազմել է 5,811,289.00 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 6,189,366.20 հազ. դրամ:

**6.7.2** «ՀՀ 2021 թվականի **ինն ամիսների** պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների» հաշվետվության համաձայն «Տարրական ընդհանուր հանրակրթության» դասարանների սովորողների միջին տարեկան թիվը 2021 թվականի տարեկան ճշտված պլանով սահմանվել է 47,206 աշակերտ, միջոցառման վրա կատարվող ծախսը 7,924,617.40 հազ. դրամ: 2021 թվականի **ինն ամիսների** սովորողների ճշտված թիվը նույնպես սահմանվել է 47,206 աշակերտ, իսկ կատարվող ծախսը 6,128,554.00 հազ. դրամ: Նշված ժամանակաշրջանի համար փաստացի աշակերտների թվաքանակը կազմել է 47,752 աշակերտ, իսկ միջոցառման վրա կատարվող դրամարկղային ծախսը 5,811,289.00 հազ. դրամ: Պլանավորվածի համեմատ տարբերությունը կազմել է 546 աշակերտով ավել, իսկ ծախսը՝ 317,265.00 հազ. դրամով պակաս:

**Հաշվեքննության օբյեկտի կողմից ծրագրի վերաբերյալ առարկություններ կամ բացառություններ չի ներկայացվել:**

**6.8 (1157-12002) «Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ»**

«Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ» ծրագրի համար ՀՀ պետական բյուջեից նախարարությանը 2021 թվականի տարեկան ծրագրով նախատեսվել է հատկացնել 2,229,951,60 հազ. դրամ սուբվենցիա, տարեկան ճշտված պլանով այն կազմել է 729,951,60 հազ. դրամ: 2021 թվականի ինն ամիսների համար ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 560,970.00 հազ. դրամ: ՀՀ 2021 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ՝ ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների հաշվետվության դրամարկղային ծախսը և փաստացի ծախսը կազմել է 560,970.00 հազ. դրամ:

**6.8.1** «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային ցուցանիշների կատարման վերաբերյալ» հաշվետվության համաձայն 2021 թվականի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է ապահովել Երևան քաղաքի արտաքին լուսավորությամբ ապահովված 1,698.3 կմ երկարությամբ փողոցներ, իսկ 2021 թվականի ինն ամիսների ճշտված պլանով նախատեսվել է ապահովել 1698,3 կմ:

Փաստացի ապահովվել է Երևան քաղաքի արտաքին լուսավորությամբ ապահովված 1691,3 կմ երկարությամբ փողոցներ, կամ 7 կմ-ով պակաս:

**6.8.2** 2021 թվականի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է ապահովել 2628 հատ արտաքին լուսավորությամբ ապահովված օբյեկտներ, իսկ 2021 թվականի ինն ամիսների համար ճշտված պլանով նախատեսվել է ապահովել 2628 հատ օբյեկտի լուսավորություն, փաստացի ապահովվել է 2665 հատ օբյեկտների լուսավորություն, փաստացի իրականացվել է տարեկան և ինն ամիսների համար նախատեսվածից 37 լուսավորության օբյեկտով ավելի աշխատանքներ, որոնք առանց պայմանագրում փոփոխություն կատարելու ընդունվել է պատվիրատուի կողմից:

**Հաշվեքննության օբյեկտի կողմից ծրագրի վերաբերյալ առարկություններ կամ բացառություններ չի ներկայացվել:**

**6.9 (1049-11007) «Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի համակարգում և կառավարում»**

**6.9.1** ՀՀ պետական բյուջեից Ծրագրի համար նախարարությանը 2021 թվականի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 2,109,916.3 հազ. դրամ, իսկ ՀՀ կառավարության 30.12.2020 թվականի թիվ 2215-Ն որոշման համաձայն 2021 թվականի ինն ամիսների ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1,367,397.50 հազ.դրամ, ՀՀ 2021 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ՝ ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների հաշվետվության դրամարկղային ծախսը կազմել է 1,127,696.34 հազ. դրամ, փաստացի ծախսը 1,127,190.47 հազ. դրամ:

**6.10 (1146-11002) Հիմնական ընդհանուր հանրակրթություն**

«ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 30.12.2020 թվականի թիվ 2215-Ն որոշման 10-րդ կետի 1-ին ենթակետի բ) մասի համաձայն «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված «Հիմնական ընդհանուր հանրակրթություն» ծրագրի գծով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված իրավունքները փոխանցվել են Երևանի քաղաքապետարանին:

**6.10.1** «Հիմնական ընդհանուր հանրակրթություն» ծրագրի համար ՀՀ պետական բյուջեից 2021 թվականին նախարարությանը տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 8,968,737.7 հազ. դրամ /սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպությունների համար/: 2021 թվականի ինն ամիսների ճշտված պլանով ՀՀ կառավարության 30.12.2020 թվականի թիվ 2215-Ն

որոշման համաձայն նախատեսվել է հատկացնել 6,941,803.00 հազ. դրամ: ՀՀ 2021 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ՝ ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների հաշվետվության դրամարկղային ծախսը կազմել է 6,940,837.10 հազ. դրամ, փաստացի ծախսը 7,897,674.10 հազ. դրամ:

**6.10.2** Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 2021 թվականի ինն ամիսների ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության համաձայն Հիմնական ընդհանուր հանրակրթության դասարանների սովորողների միջին տարեկան թիվը 2021 թվականի ինն ամիսների ճշտված պլանով սահմանվել է 53274 աշակերտ, միջոցառման վրա կատարվող ծախսը 6,941,803.0 հազ. դրամ, փաստացի աշակերտների թվաքանակը կազմել է 55422, դրամարկղային ծախսը 6,940,837.10 հազ. դրամ, տարբերությունը կազմել է 2148 աշակերտ՝ 965.90 հազ. դրամով:

**Հաշվեքննության օբյեկտի կողմից ծրագրի վերաբերյալ առարկություններ կամ բացառություններ չի ներկայացվել:**

## **6.11 (1189-12001) «Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիր»**

**6.11.1** Համաձայն ՊԸՊ 35.2 կետի, ծրագրի մասին թարմ տեղեկատվությունները (թարմացված ծրագիր) պետք է ցույց տան յուրաքանչյուր գործողության իրական առաջընթացը և այդ առաջընթացի ազդեցությունը մնացած աշխատանքի ժամկետների, ինչպես նաև գործողությունների հաջորդականության վրա: Համաձայն ՊԸՊ և ՊՀՊ 35.3 կետի, կապալառուն պետք է թարմացված ծրագիրը ներկայացնի ծրագիր դեկավարի հաստատմանը 90/180 օրյա հաճախականությամբ:

2021թ ինն ամիսների ընթացքում շինարարական աշխատանքներ իրականացվել են թվով 17 դպրոցներում: 2021թ 3-րդ եռամսյակում կնքված թվով 4 պայմանագրերով թարմացված ծրագրի ներկայացման ժամկետը սահմանվել է 180 օր: Մնացած թվով 13-ինը՝ պայմանագրով սահմանված են եղել 90 օր, սակայն սահմանված ժամկետում չեն ներկայացվել: Դրանցից իննում (A-23EN, A-17EN, A-20EN, A-38AR, A-15EN, A-16EN, A-11EN, A-10EN և A-41AN)՝ 01.06.2021թ-ին կնքված համապատասխան փոփոխության համաձայնագրով, ժամկետը երկարացվել է մինչև 180 օր:

Վերը նշված թվով 13 պայմանագրերից 2-ով (A-18EN և A-20EN)՝ թարմացված ծրագիր ընդհանրապես չեն ներկայացվել, իսկ 10 պայմանագրերով (A-06VZ-1, A-08LR, A-23EN, A-17EN, A-38AR, A-15EN, A-16EN, A-11EN, A-41AN և A-25GQ) թարմացված ծրագրերը ներկայացվել է նախատեսված ժամկետից ուշ:

Ներկայացված թարմացված ծրագրերում, բացառությամբ թիվ A-11EN և A-16EN պայմանագրերի, ներկայացվել են միայն ըստ ամիսների պլանավորված աշխատանքները, և չեն ներկայացվել իրական առաջընթացը, ընդ որում, A-11EN պայմանագրով 28.09.2021թ-ին ներկայացված թարմացված ծրագրում ներառվել է 2021թ հոկտեմբեր ամսվա իրական առաջընթացը: Անհրաժեշտ է նշել այն հանգամանքը, որ թարմացված ծրագրում հնարավոր չէ ներառել ներկայացման ամսաթվի հաջորդող ամսվա իրական առաջընթացը:

### **Հաշվեքննվող օբյեկտի առարկություններն և պարզաբանումները**

«Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագրի» վերը նշված անհամապատասխանության վերաբերյալ Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացվել է հետևյալ առարկությունը և բացատրությունը.

13 պայմանագրերով 90 օր սահմանված ժամկետում թարմացված ծրագիր չներկայացնելու վերաբերյալ հայտնում ենք, որ դրանք կնքված են եղել մինչև հաշվետու ժամանակահատվածը, որի վերաբերյալ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը իր դիրքորոշումը ներկայացրել է 2021 թվականի ապրիլի 29-ի Ե/01/733-21 գրությամբ:

Հայտնում ենք նաև, որ A-18EN պայմանագիրը ավարտվել է 2021 թվականի ապրիլի 27-ին և հետևաբար չէր կարող ծրագիրը թարմացվել հաշվետու ժամանակահատվածում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ 2021 թվականի հունիս ամսին պայմանագրերում իրականացվել են փոփոխություններ և ծրագրի թարմացման 90-օրյա ժամկետը փոխարինվել է 180 օրյա ժամկետով: Այս փոփոխությամբ պայմանավորված ծրագրերի թարմացման վերաբերյալ տեղեկատվությունը տեսանելի կլինի հետագա եռամսյակների հաշվետվություններում:

### **Հաշվեքննողի մեկնաբանությունը**

Հաշվեքննության օբյեկտի կողմից ծրագրի վերաբերյալ ներկայացված առարկությունները, չեն ընդունվում, քանի որ անկախ Հիմնադրամի ներկայացրած դիրքորոշումից պայմանագրային պարտավորություններն ենթակա են կատարման և հայտնված դիրքորոշումը չի ազատում դրանց կատարումից:

**6.11.2** Համաձայն ՊԸՊ և ՊՀՊ 58.1 կետի, կանխավճարը պետք է լինի 20 տոկոս, և պատվիրատուն այն պետք է վճարի անվերապահ բանկային երաշխիքի դիմաց՝ 28 օրից ոչ ուշ:

Թիվ A-21EN պայմանագրի կանխավճարի երաշխիքը բանկի կողմից ներկայացվել է 08.09.2021թ-ին, կանխավճարը կապալառուին փաստացի փոխանցվել է 19.10.2021թ-ին՝ 41 օրում:

### **Հաշվեքննվող օբյեկտի առարկություններն ու բացատրությունները**

Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ համաձայն ենք այն դիրարկմանը, որ համաձայն ՊԸՊ և ՊՀՊ 58.1 կետի, կանխավճարը պետք է լինի 20 տոկոս, և պարտավորություն այն պետք է վճարի անվերապահ բանկային երաշխիքի դիմաց՝ 28 օրից ոչ ուշ: Սակայն հարկ ենք համարում նշել, որ դա չի նշանակում, որ պարտավորություն պարտավոր է բանկային երաշխիքի դիմաց վճարումն իրականացնել **բանկային երաշխիքի տրամադրման օրվանից 28 օրյա ժամկետում:** Խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ բանկային երաշխիքը հնարավոր է, որ պարտավորություններ կայացվի ոչ նույն կամ հաջորդ օրվա ընթացքում: Այս համարադրումը պարտավորության կողմից ներկայացված բանկային երաշխիքների վճարումները իրականացվել են բացառապես յուրաքանչյուր ծրագրի մեկնարկի օրվանից 28 օրվա ընթացքում:

Հարկ ենք համարում նշել նաև, որ պարտավորության գնահատմամբ դեռևս չմեկնարկված ծրագրերի համար կանխավճարի տրամադրման մեջ առկա են ռիսկեր, պայմանավորված այն հանգամանքով, որ մեկնարկի համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի առկայության ապահովումը և շինարարության մեկնարկի համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տեխնիկական հսկողության խորհրդարարի ընտրության գործընթացը կարող է տևել որոշակի ժամանակահատված, իսկ այդ ընթացքում տրամադրված երեշխիքային միջոցները կարող են օգտագործվել այլ՝ ոչ պայմանագրով նախատեսված նպատակներով: Ցանկանում ենք նաև նշել, որ պայմանագրի համաձայն կանխավճարը տրամադրվում է կապալառուին մոբիլիզացիոն ծախսեր իրականացման համար, որով պայմանավորված պարտավորություն համարում է ոչ նպատակահարմար դեռևս չմեկնարկված պայմանագրով մոբիլիզացիոն ծախսերի իրականացումը:

